Հուսիկ Արա

Մի՛ գնա

Քեզ ինձնից տանող ոտնաձայները
խրվում են աչքերիս մեջ՝ դանդաղ ասեղներ,
և ես չեմ տեսնում, թե հեռուն որքան է քեզ տարել,
իսկ ինչպես են քայլերդ տրորում
իմ ապրելու օրերը,
զգում է սիրտս:

Ե՛տ նայիր, հոգիս,
ամբողջ աշխարհ ես թողել քո անունով,
մի հայացքդ թույլ չի տա, որ այն ավերվի:
Ես չգիտեմ, արդյոք ուզո՞ւմ եմ մնաս,
բայց դու շուռ արի,
որ ե՛ս չգնամ:

Միակն ես անգամ հեռացումիդ մեջ,
անդող, անողոք, քեզ նման.
կա՛նգ առ, մի քիչ էլ զգամ մոտիկ լինելդ՝
թեկուզ մեջք շրջած ու արհամարհանքիդ մեջ.
այդ հեռու մոտիկն էլ բավական է
ինձ հասնելու համար:

Մի՛ գնա դատարկ աշխարհի մեջ,
կյանքս լիքն է քեզնով.

մի պահ ետ նայիր,
և ես կմնամ: